



# Որակի քաղաքականություն

«Էյ-ի-Ջի Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությունը հայտարարում է, որ որակի քաղաքականությունը հանդիսանում է ընկերության Առաքելությունից, Լպատակներից, Ռազմավարությունից բխող սկզբունքների և արժեքների արտահայտման միջոց:

«Էյ-ի-Ջի Սերվիս» ՄՊԸ ղեկավարությունը Որակի Կառավարման Համակարգի ստեղծումը համարում է ընկերության գործունեության ռազմավարության կարևորագույն բաղկացուցիչը, որը թույլ կտա իրականացնել արդյունավետ բիզնես - գործընթացներ և կառավարել դրանք: Բիզնես - գործընթացների այսպիսի համակարգի ստեղծումը կհանգեցնի մեր սպառողներին զազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման, արդյունաբերական և կենցաղային զազասարքերի տեղակայման, հավաքակցման, կարգաբերման և նորոգման, էներգետիկայի և ջրային ուղղորտներում՝ հիդրոտեխնիկական կառույցների, փախադրման և բաշխման ցանցերի և այլ օբյեկտների նախագծման, կառուցման, կառավարման, շահագործման և սպասարկման, առևտրային գործունեության, այդ թվում՝ արտադրանքի և ապրանքների ներկրման, իրացման և (կամ) արտահանման, ծխահեռացման և օդափոխության համակարգերի կառուցման, թեստավորման, նորոգման և սպասարկման, անվտանգության ազդանշանային համակարգերի և սարքերի տեղակայման, կարգաբերման և սպասարկման, սարքերի, սարքավորումների և տեխնիկական համակարգերի մշակման, նախագծման, արտադրության և իրացման երաշխավորված կայուն մակարդակով բարձրակ ծառայությունների մատուցման:

«Էյ-ի-Ջի Սերվիս» ՄՊԸ ղեկավարությունը սահմանում է որակի հետևյալ նպատակները՝

- ❖ Մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում սպառողների պահանջների և սպասելիքների առավել լիարժեք բավարարման համար՝ ձգտելով գերազանցել նրանց սպասելիքները:
- ❖ Մատուցվող ծառայությունների որակի համար պատասխանատվություն սպառողի հանդեպ:
- ❖ Սպառողների կողմից բողոքների քանակի անընդհատ նվազեցում՝ ի հաշիվ Սպառողների հետ պարբերաբար աշխատանքների իրականացման:
- ❖ Սպառողի մոտ ընկերության վարկանիշի բարձրացում:
- ❖ «Էյ-ի-Ջի Սերվիս» ՄՊԸ մրցունակության բարձրացում և ծառայությունների սպառողական արժեքի ավելացում:

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝

- ԻՍՕ 9001 : 2008 ՄՍ համապատասխան Որակի Կառավարման Համակարգի մշակում, ներդրում, աշխատանքային վիճակում պահպանում և շարունակական բարելավում:
- Բիզնես - գործընթացների օպտիմալացում՝ ի հաշիվ ժամանակակից տեղեկատվական համակարգերի կիրառման:
- Գործընթացների շարունակական բարելավման ընթացքում նոր աշխատուժի ներգրավում, կորպորատիվ մշակույթի զարգացում և աշխատանքային պայմանների բարելավում:
- Աշխատողների որակավորման բարձրացում և նպատակաուղղված ուսուցում:
- Սպառողի հետ թափանցիկ հարաբերությունների պահովում՝ նրան տրամադրելով մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ տեղեկատվություն:
- Մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ խիստ հսկողության իրականացում՝ բոլոր փուլերում:
- Մատուցվող ծառայությունների որակի հնարավոր անկման կանխարգելմանն ուղղված աշխատանքների իրականացում և ոչ միայն առաջացած խնդիրների վերացում:
- Սպառողների և մատակարարների հետ փոխշահավետ գործընկերային հարաբերությունների աստարում:

Ընկերության բարձրագույն ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Որակի քաղաքականության իրագործման և ընկերության աշխատողներին իրազեկման համար:

Գլխավոր տնօրեն  
17.07.2013 թ.

Ա.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

